ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

" 14 " դեկտեմբերի 2012թ № 185-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ <<ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԱՄԱՆՈՐ>> ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ) և 1.19 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 08.02.05.03. <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով նախատեսված հատկացումների՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. <<Սյունիքյան Ամանոր>> տոնակատարություն կազմակերպելու նպատակով 2.000.0 հազ. դրամ (երկու միլիոն դրամ) տրամադրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով համապատասխան պայմանագիր:
2. Հաստատել <<Սյունիքյան Ամանոր>> տոնակատարության անցկացման կազմակերպական կոմիտեի կազմը, կանոնադրությունը, անցկացման ծրագիրը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5 հավելվածների:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ միջոցառումների և գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ.դեկտեմբերի 14
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. դեկտեմբերի 14-ի
N 185 -Ա որոշման

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

«Սյունիքյան Ամանոր» մարզային տոնակատարության

1. Ս. Խաչատրյան - ՀՀ Սյունիքի մարզպետ, նախագահ
2. Վ. Գրիգորյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ/տեղակալ/
3. Լ. Մարգարյանյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ա. Մարդյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
5. Ս. Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի պետ
6. Ա. Հայրապետյան - Կապանի քաղաքապետ /համաձայնությամբ/
7. Ն. Ոսկանյան - Գորիսի քաղաքապետ /համաձայնությամբ/
8. Ա. Հովհաննիսյան - Մեղրիի քաղաքապետ /համաձայնությամբ/
9. Մ. Զաքարյան - Ագարակի քաղաքապետ /համաձայնությամբ/
10. Ա. Հակոբջանյան - Սիսիանի քաղաքապետ /համաձայնությամբ/
11. Վ. Գևորգյան - Քաջարանի քաղաքապետ /համաձայնությամբ/
12. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. դեկտեմբերի 14-ի
N 185-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Սյունիքյան Ամանոր» մարզային տոնակատարության

1. Նպատակը
   - Սյունիքի մարզի համայնքների և միջև սերտ կապերի ամրապնդում, Ամանորը և Սուրբ ծնունդը որպես ազգային ծիս ու ծիսակատարություն գաղափարի վերլուծություն ու յուրովի ներկայացում, տարվա շնորհալի և տաղանդաշատ կատարողների մշակութային և ստեղծագործական աշխատանքների ներկայացում, մարզում մշակութային կյանքի աշխուժացում, հասարակական, մշակութային կյանքում մատաղ սերնդի դերի բարձրացում:
2. Միջոցառման պատվիրատուն և կատարողը.
   - <<Սյունիքյան Ամանոր >> մարզային տոնակատարոըթյան պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը <<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ը: Միջոցառման ղեկավարումը իրականացնում է միջոցառման կազմակերպման նպատակով ստեղծված կազմկոմիտեն և <<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ը:
3. Միջոցառման մասնակիցները
   - <<Սյունիքյան Ամանոր>> մարզային տոնակատարությանը մասնակցում են մարզի տարածաշրջաններից հրավիրված երաժշտական և պարային խմբեր, անհատ կատարողներ, երաժիշտներ, դերասաններ, նկարիչներ և մշակութային այլ գործիչներ:
4. Միջոցառման ժամկետը և վայրը
   - Միջոցառումը անց է կացվելու 2012թ. դեկտեմբեր 2013թ.հունվար ամիսներին մարզի տարածաշրջաններում:
5. Միջոցառման ընթացքը և ծախսերը
   - <<Սյունիքյան Ամանոր>> մարզային տոնակատարությունը կազմակերպվում է ըստ ծրագրի, հաստատված ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ժամանակացույցը և առանձին միջոցառումների անցկացման վայրը:

   Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ;

   Տոնակատարության անցկացման հետ կապված ծախսերը /տրանսպորտի, վառելիքի, նվերների, հուշանվերների և պարգևատրման, սննդի և սպասարկող անձնակազմի/ հոգում են միջոցառման կազմակերպիչները՝ համաձայն հաստատված նախահաշվի:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. դեկտեմբերի 14-ի
N 185-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«Սյունիքյան Ամանոր» մարզային տոնակատարության

1. Հասարակությանը ներկայացնել մարզի մշակութային գործիչներին, տարվա ընթացքում ի հայտ եկած լավագույն երաժշտական խմբերին, անհատ կատարողներին, ստեղծագործողներին, բարեկամական կապերի ընդլայնում և ամրապնդում մարզի համայնքների հետ, մշակույթի զարգացման ամրապնդում:
2. Միջոցառմանը կներառվեն հետևյալ բնագավառները՝
   - կերպարվեստ
   - երաժշտարվեստ /խմբեր և անհատ կատարողներ/
   - պարարվեստ /ժողովրդական և ժամանակակից/
   - բեմարվեստ /հումոր, նմանակումներ, ասմունք և այլն/, թատերական ներկայացում
3. Պսակադրում Արցախյան ազատամարտում զոհվածների շիրիմներին:
4. Տիկնիկային թատերական ներկայացումներ մարզի համայնքներում:
5. ՀՀ Սյունիքի մարզի վաստակաշատ մարդկանց մեծարման ցերեկույթներ:
6. Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը զոհված ազատամարտիկների ընտանիքներ:
7. Ձմեռ պապի, Ձյունանուշի այցը 2013թ. հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին:
8. Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը մարզի 100 տարին լրացած տարեցների և 6 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներ;
9. Տոնական համերգային ելույթներ մարզի N զորամասերում, մարզի գյուղական համայնքներում:
10. Նկարիչների ցուցահանդես <<Սյունիքյան ձմեռ>> թեմայով;
11. Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը Կապանի տարեցների կենտրոն;
12. Տոնական համերգային ելույթներ և թատերական ներկայացում մարզի համայնքներում;
13. Միջոցառման լավագույն և ակտիվ մասնակիցների պարգևատրում պատվոգրերով և հուշանվերներով:
14. Ուրախ տոնակատարություն և հյուրասիրություն ավանդական ուտեստներով:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ.դեկտեմբերի 14-ի
N 185 - Ա որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
«Սյունիքյան Ամանոր » մարզային տոնակատարության

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազ.դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216.21	135.0
2	Սարքեր և սարքավորումների վարձակալում	4216.22	40.0
3	Գովազդ	4234.21	20.0
4	Հանրային սննդի ծառայության ծախսեր	4236.21	800.0
5	Նվերներ	4237.12	509.0
6	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239.11	100.0
7	Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման Ծախսեր	4240.00	266.0
8	Գրասենյակային նյութեր և ապրանքներ	4261.11	50.0
9	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269.11	80.0
	Ընդամենը		2.000.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկ[illegible] Ռ. Ղազարյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ.դեկտեմբերի 14-ի
N 185-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«Սյունիքյան Ամանոր » մարզային տոնակատարության

Հ/հ	Ժամանակը	Միջոցառման անվանումը	Վայրը
1	12^{00}-20^{00}	25-31.12.2012թ. Տոնական համերգային ելույթներ գյուղական համայնքներում <<Սյունիքյան Ձմեռ>> նկարիչների աչքերով ցուցահանդես	ՀՀ Սյունիքի մարզ քաղաքային և գյուղական համայնքներ Գորիսի և Սիսիանի տարածաշրջան
2	13^{00}-14^{30} 17^{00}-19^{30} 13^{00}-18^{00}	25.12.2012թ. ՀՀ Սյունիքի մարզի գյուղական համայնքներում վաստակաշատ մանկավարժների մեծարման ցերեկույթ Տոնական համերգային ելույթ գյուղական համայնքում	ՀՀ Սյունիքի մարզ, գյուղական համայնքներ
3	12^{00}-13^{30} 13^{30}-14^{00} 14^{30}-16^{00}	26.12.2012թ. Թատերական տիկնիկային ներկայացում և տոնական համերգ Պսակադրություն Արցախյան պատերազմում զոհվածների հուշաքարին Ամանորի տոնական հանդիսություն և համերգ	Համայնքներ
4	11^{00}- 20^{00}	27.12.2012թ 2012թ. դեկտեմբեր -2013թ. հունվար Տոնական համերգային ելույթներ ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասերում	ՀՀ Սյունիքի մարզ

5	13^{00}-14^{00} 14^{00}-15^{00}	28.12.2012թ. Զոհված ազատամարտիկների ծնողների, ընդունելություն և տոնական հյուրասիրություն ՀՀ Սյունիքի մարզպետի մոտ Ազգային փոքրամասնությունների պատվիրակության ընդունելություն և տոնական հյուրասիրություն	ՀՀ Սյունիքի մարզպետարան
6	15^{00}-21^{00}	11.01.2013թ. Ամանորի տոնակատարություն և հյուրասիրություն ավանդական ուտեստներով	ք. Կապան
7	11^{00}-18^{00}	30.12.2011թ-12.01.2013թ. Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը մարզի 100 տարին լրացած տարեցների և 6 և ավելի անչափահաս երեխեներ ունեցող ընտանիքներ, Ամանորի տոնակատարություն և համերգային ելույթներ	Կապանի տարածաշրջան ք.Սիսիան ք.Գորիս ք.Մեղրի
8	16^{00} - 20^{00}	31.12.2012թ. Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը Արցախյան ազատամարտում վիրավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքներ	ք. Կապան
9	10^{00} - 20^{00}	2.01.2013թ. Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը 2012թ. հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին	Մարզի տարածաշրջաններ
10	11^{00}-15^{00}	3.01.2013թ. Ձմեռ պապի և ձյունանուշի այցը Կապանի տարեցների կենտրոն	ք.Կապան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան